ԱՐԵՎԻ ԱՍՏՎԱԾԸ ՎԱՂ ՈՒՐԱՐՏՈՒԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ժամանակին հին հայոց հավատալիքներում առաջնային է եղել արևի, արեգակնային լույսի և դրանք անձնավորող աստվածների պաշտամունքը: Ըստ այդմ, հայկական տոմարի յուրաքանչյուր ամսվա առաջին օրը՝ ուրեմն, նաև յուրաքանչյուր տարվա առաջին օրը կրում էր Արեգ *անունը: Միսական թաքուի պատճառով միշտ չէ, որ արևը և Արևի աստվածը հանդես են եկել իրենց բուն՝* Արեգ/Արեւ *անվամբ: Դրան հաճախ փոխարինել են արևին տրված մակդիրները:*

Արևի աստծուն նշող բառերի բազմազանության պատճառով ուրարտական արձանագրություններում նա սովորաբար հանդես է գալիս ᵘUTU *գաղափարագրի տակ՝ ի տարբերություն Խալդի աստծու, որի անունը մշտապես բերվում է վանկագիր (ᵘḪal-di): Միայն երկու արձանագրություններում է Արևի աստվածը ներկայացված վանյան* ᵘŠiuini *անվամբ*[1]*: Ի դեպ, սա Արևի աստծու բուն անունը չէ, այլ մակդիրը, որը նշանակում է «փայլուն, լուսե»՝ ծագած հ.-ե.* *k'eu- *«փայլել, լույս տալ» արմատից*[2]*:* Siuini *դիցանունն օգտագործած արձանագրություններից առաջինը գտնվում է հյուսիս-արևելքից Վանա լիճը թափվող Բերկրի (Բանդիմահի) գետի գետաբերանի շրջանում հայտնաբերված մի կոթողի վրա: Շիվինիին ձոնված այդ կոթողի արձանագրությամբ Մենուա թագավորը (մ. թ. ա. 810–786) նրանից իրեն և իր Ինուշպուա որդու համար խնդրում է «կյանք, ուրախություն, մեծություն»*[3]*: Բերկրիի շրջանում պաշտված Արևի աստծուց «ուրախություն» խնդրելիս Մենուան պետք է նկատի առներ այդ աստծու տեղական առանձնահատկությունը՝ հետագայում արտացոլված* Բերկրի *տեղանվան մեջ: «Ուրախությունը» նույն «բերկրանք» է, իսկ* բերկրանք *(< բերկր-անք) բառի հիմքը առկա է նաև հիշյալ գետի, դրա ավազանը բռնած գավառի և գավառի կենտրոն քաղաքի* Բերկրի *(< բերկր-ի) անվան մեջ: Այս տեսանկյունից ուշագրավ է տեղական հետևյալ ավանդազրույցը. «Գավառի բնակիչները իրար հանդիպելիս՝ բերկրի (ուրախացիր) են ասել, տարվա բերքի առատությունը ավետելով: Դրանից էլ գավառի անունը մնացել է Բերկրի»*[4]*: Այսուհանդերձ, «ուրախություն» խնդրելով, Մենուան շատ ավելի խորունկ կապ է բացահայ-*

---

[1] Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи *(այսուհետև՝* УКН*)*. М., 1960, № 95, № 275.

[2] *Ս. Պետրոսյան. Նախնական Ուրարտուի գլխավոր աստծու հարցի շուրջ.– ԳՊՄԻ գիտական աշխատությունների ժողովածու (երեք հատորով). հ. 2, Գյումրի, 1994, էջ 230–231:*

[3] УКН, № 95.

[4] *Ա. Ղանալանյան. Ավանդապատում. Երևան, 1969, էջ 152:*

տում Բերկրիի այդ աստծու ինչ-որ հատկանիշի և «ուրախություն» հասկացության միջև: Անտարակույս, այդ կապը խարսխված էր լինելու Արևի աստծու յուսեղեն էության վրա[5]:

Եթե Մենուա թագավորը Բերկրիի գետաբերանի շրջանում էր գրել Արևի աստծուն իր ձոնած կոթողը, ուրեմն, հենց այստեղ էր գտնվել «Մհերի դռան» արձանագրությունից հայտնի այդ աստծու երկրորդ նշանավոր սրբավայրը՝ URU Uisini-ն[6]: Դրա մասին է խոսում նաև Արգիշտի II-ի (մ. թ. ա. 713–685) Հաղի գյուղի արձանագրությունը[7]: Արճեշի շրջանում գտնված այդ արձանագրության մեջ հիշատակված է նաև KUR Artarapša «երկիրը», որը տեղադրվում է Վանա լճի հյուսիսարևելյան ափին հարող տարածքում[8], այսինքն՝ այնտեղ, որտեղ գտնվել է Arsašku-ն՝ Ուրարտուի առաջին մայրաքաղաքը, և որտեղ գտնվելու էր Uisini սրբավայր-քաղաքը: Artarapsa տեղանունը բարդ բառ է: Մեր կարծիքով, դրանում առկա -apsa-ն նշանակում է «սկավառակ» և նույնական է հայերեն ափսե (<*ափսայ. հմմտ. պախրէ//պախրայ, Նանէ < Նանայ) և հունարեն αψίς բառերի *aps- արմատի հետ: Հունարեն այս բառը նշանակում է «ամեն կոր կամ բոլորակաձև բան. ինչպես՝ անիվ, դուրգն, կամար, երկնակամար, ծիածան, շրջանակ, արևի սկավառակ, սկավառակ» և համարվում է ինչպես մեր ափսէ «մետաղյա սկավառակ», այնպես էլ լատիներեն absis (apsis, hapsis) «սկավառակ, կլոր ու խորունկ պնակ» բառերի աղբյուրը[9]: Այսուհանդերձ, բացառված չէ հայերեն և հունարեն բառերի մեկ ընդհանուր ակունք ունենալու հանգամանքը: Տեղանվան մեջ առկա *Artar//*Արթ-ար բառը բաղադրյալ է՝ բաղկացած արթ- արմատից և -ար վերջածանցից (հմմտ. արդ-ար, պալ-ար, կերպ-ար և այլն): Այս դեպքում արթ-ը կարելի է ծագած համարել հ.-ե. *r- > ար արմատից և նույնացնել արթուն (<արթ-ուն) բառի արթ արմատի հետ: Հ. Աճառյանը, հակադրվելով վերջինիս ծագման վերաբերյալ եղած նախկին տեսակետին, գրում է. «Քանի որ հնխ. pṛth - արմատը տալիս է արգեն հարթ-նուլ, հարթ-չիլ բայը, ուստի լավագույն է բաժանել նրանից արթ-ուն և դնել ար (յառնեմ, արի՛) «վեր կենալ» արմատից՝ թ աճականով»[10]: Դրանով հայերեն արթ-ը ազգակիցն է գառնում հ.-ե. լեզուների այնպիսի բառերի, ինչպիսիք են հին հնդկ. úd ārta «հարյավ», հուն. ὠρτο «հարյավ», ὀρθρος «արևածագ», լատին. orior «հառնեմ», ortus «արևածագ, արևելք» և այլն[11]: Այսպիսով, ուրարտական դարաշրջանի KUR Artarapsa (*Արթարափսա) տեղանվան հիմքում հնագույն հայերենի *արթար և *ափսա բառերն են, որոնցից առաջինը եղել է արևի (նաև Արևաստծու) մակդիրներից մեկը՝ «արթնացող, հառնող» իմաստով, իսկ երկրորդը նշանակել է նրա սկավառակը:

---

[5] Մ. Ա բ ե ղ յ ա ն. Երկեր. հ. VII. Երևան, 1975, էջ 39:
[6] УКН, № 27.
[7] Նույն տեղում, № 276:
[8] Н. В. А р у т ю н я н. Топонимка Урарту. Ереван, 1985, с. 41.
[9] Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան. հ. I, Երևան, 1971, էջ 366:
[10] Նույն տեղում, էջ 314:
[11] Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան. հ. III, Երևան, 1977, էջ 384:

Վերոշարադրյալը մեզ թույլ է տալիս Uišini *տեղանվան մեջ տեսնելու Արևի աստծու մեկ ուրիշ մակդիրը՝ նույնպիսի (կամ մոտավորապես նույն) իմաստով, ինչ* Siuini-*ի դեպքում է:* Uišini-*ի* *ues-*in(i) արտասանությունը ենթադրում է, որ գործ ունենք հ.-ե. նախալեզվի* *ues *«լուսավորել, այրել» արմատի և* -in(i) *վերջածանցի հետ: Վերջինս առկա է նաև* Siuini, Hutuini, Nalaini *և այլ դիցանուններում, լուսին, դարբին, կարգին և այլ բառերում: Հնդեվրոպական այս նույն արմատից կազմված և լուսավոր երևույթներ ու աստվածություններ նշող անուններ կան նաև հ.-ե. մյուս լեզուներում. հմմտ. հին հնդ.* vāsara *«առավոտյան», «օր»,* avasran *«նրանք լուսավորեցին», հուն.* ἠώς *«արշալույս, լուսաբաց», «օր», «արևելք»,* Ἠώς *«Արշալույսի դիցուհին», լատին.* Vesta *«օջախի դիցուհին» և այլն*[12]*:*

Հնդեվրոպական նախալեզվի հիշյալ արմատից ծագած և, մեր կարծիքով, նախապես Արևի աստծու մակդիրը եղած, իսկ հետագայում ավելի լայն իմաստային գաշտի մեջ ընդգրկված բառ է եղել հայերեն վեհ*-ը: ՆՀԲ-ում բերված են այդ բառի հետևյալ նշանակությունները. «Երկնային. վերին, վերինք. երկնայինք. հրեշտակք. և ըստ հեթանոսաց՝ դիւցազինք. գիք. կիսաստուածք», «Բարձրեալն աստուած. որ էն»*[13]*: Կարծիք է հայտնվել բառի իրանական փոխառության լինելու վերաբերյալ*[14]*: Նախ՝ իրանական լեզուների նմանահունչ բառերը ծագում են ոչ թե հիշյալ, այլ «լավ» նշանակող հ.-ե.* *ues- *արմատից (որից կարող են լինել մեր* վէս *«հպարտ, գոռոզ, ամբարտավան» և* վէստ//վեստ *«ազատ, ազնվական, իշխան» հուսալի ստուգաբանություն չունեցող բառերը)*[15]*: Ապա՝ իրանական բառերը չունեն այնպիսի լայն իմաստային գաշտ, ինչպիսին ունի մեր* վեհ*-ը: Ենթադրում ենք, որ* վեհ *բառը «Բարձեալն աստուած» նշանակությամբ կիրառվել է դեռևս այն հեռավոր ժամանակներում, երբ հայոց հնադույն դիցարանը գլխավորում էր Արևաստվածը, որը կրել է նաև հ.-ե.* *ues- (>*ues-in-, *վեհ) *արմատով կազմված մակդիր*[16]*:*

Uišini *բնակավայրը և* Artarapša *շրջանը գտնվում էին* Aramalē *նահանգում*[17]*, որի անունը անխզելի կապի մեջ է Ուրարտուի տառջին թագա-*

---

[12] Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы. Т. I, Тбилиси, 1984, с. 223, 229. *Հ.-ե. նույն արմատն է ընկած նաև գալուն (<*ues-r-), հին սլավ.* vesna *և այլ նույնիմաստ բառերի հիմքում (Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան. հ. I, էջ 524):*

[13] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ). հ. II, Երևան, 1981, էջ 799:*

[14] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան. հ. IV, Երևան, 1979, էջ 327:*

[15] *Նույն տեղում, էջ 329, 336:*

[16] *Նախապես Արևի աստծուն կարող էր վերաբերել նաև նույնիմաստ* վեհագունութիւն *բառը իր բոլոր նշանակություններով՝ «դերազանցութիւն, առաւելութիւն, վսեմութիւն, մեծութիւն, բարձրութիւն, լաւութիւն, ընտրականութիւն» (ՆՀԲ, հ. II, էջ 800):*

[17] И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту *(այսուհետև՝* АВИИУ).– "Вестник древней истории", 1951, № 2–4; № 27. Aramale (<*Aram-ale) *նահանգի անվան երկրորդ բաղադրիչը տեղանվանակերտ վերջածանց է. հմմտ.* Դարան-աղի, Մանան-աղի, Մարդ-աղի *դավառանունները (*Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана. Ереван, 1971, с. 55-56, *Գ ր. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Ուրարտուի պատմությունը. Երևան, 1940, էջ 138, ծանոթ. 1):*

վոր Արամեի (Արամու՝ մինչև մ. թ. ա. 845) անվան հետ[18]*: Այստեղ էր գտնվում նաև Արամեի գահանիստը՝ Ուրարտուի առաջին մայրաքաղաք* Arşasku-*ն (հետագա Արճեշը)*[19]*:* Aramalē *նահանգը կազմած տարածքը (կամ դրա մեծ մասը) ավելի ուշ ընդգրկված էին Մեծ Հայքի Աղիովիտ և Առբերանի գավառների մեջ*[20]*: Մ. թ. ա. 713 թ. Ասորեստանի թագավոր Սարգոն II-ի բանակն այս նույն շրջանում՝ Վանա լճի հյուսիսարևելյան ափերի մոտ ավերել էր նաև ուրարտական թագավորներին և արքայազուններին պատկանող Արբուն, Ռիարը և շրջակա բնակավայրերը*[21]*: Այս առթիվ Ն. Ադոնցը նկատում է, որ հայ Արշակունիների ժամանակ ևս այս շրջանը հատկացված էր թագավորական տան անդամների բնակության համար*[22]*: Նույնպիսի կարգավիճակ այդ շրջանն ունեցել է նաև Երվանդունիների և Արտաշիսյանների օրոք*[23]*: Ուրարտուի արքայատոհմի ժառանգական տիրույթ այս շրջանը հետագայում ևս Արևասածու պաշտամունքի գլխավոր օջախներից մեկն էր: Դրա ուղղակի վկայությունն է այն, որ Բերկրի գետի ավազանում Արևասածու պաշտամունքի հիշողությունը կենդանի էր անգամ XIX–XX դդ. սահմանագլխին: Այդ են վկայում Վանում գրի առնված և «արեգակ» պատասխանն ակնկալող հանելուկները: Ահա դրանցից մեկը.*

«Մեյ (մեկ) խավք մը կա իլանի (ավետաբեր),
Բարձրակտուց սիլանի (փայլուն).
Կուտ կուտե երկրի,
Կերթա թառի Բերկրի»[24]*:*

Բերկրիի շրջանը գտնվում է Վան քաղաքից հյուսիս, որտեղ վանեցիների տեսանկյունից՝ արևը երբևէ չի լինում, ուստի եթե վանեցին իր Արե-հավքին ուղարկում էր հյուսիսում գտնվող Բերկրի թառելու, ապա դրանով տուրք էր տալիս իր հեռավոր նախնիների այն պատկերացմանը, որով Բերկրիի շրջանը համարվել է Արև-հավքի բույնը՝ Արևասածու հնագույն բնօրրանը:

Օ. Գարնին խեթական Արևի աստվածության առթիվ գրում է. «Ինչու՞ է ասվում, որ Արևի աստվածը ելնում է ծովից: Ենթադրություն է արվել, որ այդ բառակապակցությունը, հավանաբար, մատնանշում է խեթական Արևի աստծու ոչ տեղական, ոչ անատոլիական ծագումը, որ նա բերվել է այստեղ արևելյան ծովափին ինչ-որ տեղ ապրած ժողովրդի կողմից՝ Իսկա-

---

[18] Ն. Ադոնց. Հայաստանի պատմություն. Երևան, 1972, էջ 211, 354, Գր. Ղափանցյան. նշվ. աշխ., էջ 138, ծանոթ. 1:

[19] АВИИУ, № 27. О. О. Карагезян. Локализация урартского царского города Арцашку.— "Вестник общественных наук" АН АрмССР, 1976, № 5, с. 94—98.

[20] Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 211, Ս. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի. Երևան, 1963, էջ 33, 37:

[21] 21. АВИИУ, № 46.

[22] Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 194:

[23] Ս. Պետրոսյան. Գնունի նախարարական տոհմի և գինու պաշտամունքի շուրջ.— ՊԲՀ, 1999, № 2–3, էջ 178–180:

[24] Ս. Հարությունյան. Հայ ժողովրդական հանելուկներ. Երևան, 1965, էջ 4:

պես էլ, հայտնի է հետաքրքիր մի մանրամասն. մի տեքստում Արևի աստվածը նկարագրվում է ձկները գլխին, և գոյություն ուներ Արևի աստծու առանձին տեսակը՝ հայտնի որպես «ՀՐի Արևաստված»[25]: Արևաստծու ծովից կամ մեծ լճից (խեթ. aruna-) ելնել//ծնվելու տեսանկյունից ուշադրության է արժանի մեր հեթանոսական աստվածներից Վահագնին ձոնված հայտնի օրհներգը և խեթական հիշյալ տեքստի առթիվ Վ. Իվանովի և Թ. Գամկրելիձեի արած այն դիտողությունը, թե այդ ծով//մեծ լիճը կարող էր լինել կամ Կասպից ծովը, կամ Վանա և Ուրմիա լճերը[26]: Ս. Հմայակյանը նախապատվությունը տալիս է Վանա լճին[27]: Արճեշի շրջակայքի առնչությամբ ուշագրավ է խեթական տեքստի այն մասը, որտեղ Արևի աստվածը ներկայացված է ձկները գլխին: Ինչպես ասվեց, այստեղ՝ Բերկրիի դետաբերանի մոտ է գտնվել Մենուա արքայի կողմից Արևի աստծուն ձոնված կոթողը, իսկ Բերկրի դետը «Վանա ծովու ամենեն նշանավոր գետն է այս՝ յուր ջրույն և ձկանց առատությամբ»[28]: Այս հանգամանքը չէր կարող վրիպել հայոց թագավորների աչքից, որոնք էլ այստեղ կառուցել էին տվել Առեստավանի արքունի ձկնորսարանը: Փավստոս Բուզանդն այն տեղադրում է «առ ափն ծովուն Բզնունեաց, յԱռեստ աւանի..., ի վերայ գետակին»[29] և կոչում «ձկնատենիքն Առեստեայ»[30]: Այս տեսանկյունից ուշադրության է արժանի նաև գետի ժամանակակից Բենդիմահի//Բանդիմահի անունը, որը պարսկերեն band-i māhī «ձկան ամբարտակ» բառն է, բնականաբար, նախապես տրված ոչ թե գետին, այլ դրա վրա գտնվող ձկնորսարանին:

Փորձ է արվել Արամեին այլ ծագում վերագրելու: Ըստ Մ. Սալվինիի, նա արամեական վարձկանների հրամանատար էր, որի նստավայրն էլ՝ Արծաշկուն, գտնվում էր ոչ թե Վանա լճին, այլ Ուրմիա լճին հարող տարածքում[31]: Այսպիսի եզրակացությունների համար իտալացի արևելագետին հիմք է ծառայել ավելի վաղ արտահայտած իր իսկ տյն կարծիքը, թե Ուրարտուն Մուծածիրի դրավումը իրականացրել էր արևելքից՝ վաղօրոք դրավված Ուրմիա լճի հարավային ափի կողմից[32]: Դրա վկայությունն էլ նա համարում է նախկին Մուծածիրի տարածքում հայտնաբերված Կելիշինի կոթողի երկլեզվյան արձանագրությունը, որի ուրարտական տեքստը փորագրված է արևելյան կողին, իսկ ասուրականը՝ արևմտյան[33]: Սակայն կոթողի կողերի այդպիսի ընտրությունը պայմանավորված էր նրանով, որ արձանագրության հեղինակների՝ Իշպուինիի և նրա որդի Մենուայի հա-

---

[25] О. Р. Г е р н и. Хетты. М., 1987, с. 125.

[26] Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. Индоевропейский язык и индоевропейцы. Т. II, М., 1984, с. 896.

[27] *Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. Վանի թագավորության պետական կրոնը. Երևան, 1990, էջ 46:*

[28] *Գ. Ս ր վ ա ն ձ տ յ ա ն ց. Երկեր. հ. I, Երևան, 1978, էջ 398:*

[29] *Փաւստոսի Բիւզանդացւոյ պատմութիւն Հայոց, Գ. ը. Երևան, 1987:*

[30] *Նույն տեղում, Դ, իբ:*

[31] M. S a l v i n i. Geschichte und Kultur Urartaer. Darmstadt, 1995, S.26.

[32] М и р й о С а л ь в и н и. Распространение влияния государства Урарту на востоке. — "Древний Восток", 4, Ереван, 1983, с. 224-225.

[33] АВИИУ, № 27.

մար արևելքը աշխարհի սրբազան կողմն էր (արևածագի վայրը՝ աղոթարանը)[34], գեպի որն ուղղված կողին էլ նրանք գրել են տվել Խալդիի սրբազան լեզվով՝ իրենց ընդունած պետական լեզվով, կազմված տեքստը:

Արևելագետներից ոմանք կասկածի տակ են առել Արամեի և Սարդուրի I-ի (մ. թ. ա. 845 – 825) ազգակցական կապը, ենթադրելով, որ Սարդուրի I-ը սերում էր մեկ ուրիշ արքայատոհմից[35]: Նրանք Սարդուրի I-ի արքայատոհմին վերագրում են մուծածիրյան ծագում՝ որպես հիմնավորում բերելով Խալդի աստծու նույնպիսի ծագման հանդամանքը[36]: Սակայն հայտնի է, որ Սարդուրի I-ը Մուծածիրի հետ որևէ առնչություն չի ունեցել[37]: Ուրմիա լճից հարավ - արևմուտք ընկած այդ իշխանությունը Սարդուրի I-ից հետո, Իշպուինիի (մ. թ. ա. 825–810) օրոք էր Ուրարտուի օգնությամբ դուրս եկել Ասորեստանի գերիշխանության տակից և հպատակվել Ուրարտուին[38]:

Արամեն արևապաշտ է եղել և որպես թաղավոր համարվել է Արևի աստծու երկրային մարմնավորումը: Այդ իրողության արձագանքներն են պահել հին հայկական ավանդազրույցները, որոնք Արամ նահապետի նվաճումները ցույց են տալիս այնպիսի ուղղություններով և այնպիսի հաջորդականությամբ, որ երկրի վրա արտապատկերվում է արևածագից մինչև մայրամուտ երկնակամարում արևի դծած ուղին՝ արևելք – հարավ – արևմուտք: Այսպես, Արամը նախ՝ արևելքում հաղթում է Նյուքար Մադեսին և «զաշխարհն նորա մինչեւ ի լեառնն անուանեալ Զարասպ՝ ի ծառայութեան հարկի կալաւ»[39], ապա՝ հարավում հաղթում է Բարշամին և «զմեծ մասն դաշտացն Ասորեստանի կալաւ ի ծառայութեան հարկի Արամ բաղում ժամանակս»[40], վերջապես՝ արևմուտքում հաղթում է Տիտանյան Պայապիսին, «որ բռնացեալ ունէր զմիջոց երկուց ծովուց մեծամեծաց՝ զՊոնտուն (Սև ծովի) եւ զՈվկիանու (Միջերկրական ծովի)»[41]: Իհարկե, ավանդազրույցների Արամ նահապետը և Ուրարտուի Արամե արքան նույնական չեն, նույնական են սակայն նրանց անունները[42]: Ընդ որում, Արամ

---

[34] Հմմտ. աղօթարան «արեւելք. իբրեւ կողմն աղօթելոյ սովորաբար» (ՆՀԲ, հ. I, Երևան, 1979, էջ 47):

[35] Б. А. Т у р а е в. История древнего Востока. Ч. II, СПб., 1912, с. 43. Այս առթիվ Գր. Ղավանցյանը գրում է. «Ենթադրում են, որ Արամեն պարտության հետևանքով զիջում է իր տեղը նոր դինաստիայի ի դեմս Սիդուրի (Սարդուրի)... Սակայն այս կարծիքը դժվար է հիմնավորել, քանի որ փաստեր չկան» (Գր. Ղ ա վ ա ն ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 137-138):

[36] Г. А. М е л и к и ш в и л и. Наири-Урарту. Тбилиси, 1954, с. 368; И. М. Д ь я к о н о в. Предыстория армянского народа. Ереван, 1968, с. 140, пр. 154.

[37] Սարդուրի I-ի դահակալությանը նախորդած ժամանակաշրջանում ևս Ուրարտուն և Մուծածիրը տարբեր պետական կազմավորումներ են եղել: Ասորեստանի Սալմանասար III թագավորը (մ. թ. ա. 859-824) Սուգունիա, Խուբուշկիա և Արիդի//Արդինի//Մուծածիր քաղաքները երեք տարբեր կազմավորումների մեջ է դնում՝ համապատասխանաբար Արամու, Կակիա և Նինի իշխողներով (АВИИУ, № 27; Д. Н. С а р к и с я н. Страна Шубриа. Ереван, 1989, с. 15, 16, 38):

[38] УКН, № 19; Н. В. А р у т ю н я н. Биайнили (Урарту), Ереван, 1970, с. 142.

[39] Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Խորենացի). Ա, ԺԴ, Երևան, 1981:

[40] Նույն տեղում, Ա, ԺԴ:

[41] Նույն տեղում:

[42] Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայոց անձնանունների բառարան. հ. I, Երևան, 1942, էջ 266:

անվամբ է ժողովուրդը, ըստ երևույթին, ճանաչել Ուրարտուի բոլոր հզոր արքաներին՝ Իշպուինիից սկած մինչև Ռուսա II (մ. թ. ա. 685–645), որոնք էլ իրականում նվաճումներ են իրագործել հիշյալ ուղղություններով: Արամ նահապետի կերպարի «արևային» էությունը բացահայտվում է նաև Անանիա Շիրակացու գրառած մի առասպելի միջոցով, որտեղ ասորեստանցի Բարշամի հակառակորդի գերում Արամի փոխարեն հանդես է գալիս «Վահագն նախնի հայոց»[43], իսկ սա նախապես Արևի աստված ընկալված հեթանոսական Վահագնն է[44]:

Արևապաշտ է եղել և Արևի աստծու երկրային մարմնավորումն համարվել նաև Արամեի հաջորդ Սարգուրի I-ը: Նա էր պետության մայրաքաղաք դարձրել արևի պաշտամունքի նշանավոր կենտրոն եղած Տուշպան[45]: Որ Սարդուրի I-ը ոչ միայն արևապաշտ է եղել, այլև Արամեի նման համարվել է Արևի աստծու երկրային մարմնավորումը, վկայում է նրա տիտղոսաշարը՝ հայտնի Վանի ժայռի ստորոտի պարսպի շարվածքում գտնվող միևնույն բովանդակությամբ արձանագրություններից: Դրանցում կարդում ենք. «Սարդուրեի արձանագրությունը, որդու Լութիպրիի, մեծ արքայի, հզոր արքայի, տիեզերքի արքայի, Նաիրիի արքայի, արքայի, որին հավասարը չկա, զարմանահրաշ հովվի, (որ) չի վախենում կռվից, արքայի, որ ենթարկում է անհնազանդներին: Սարդուրեն՝ որդին Լութիպրիի, արքա (է) արքաների, որը բոլոր արքաներից հարկ վերցրեց»[46]: Տիտղոսաշարի «տիեզերքի արքա» և «զարմանահրաշ հովիվ» բառակապակցությունները կրկնում են Արևաստծու համապատասխան մակդիրները: Հիշարժան է, որ խեթ թագավորները Արևաստծուն դիմում էին հետևյալ կերպ. «Երկնային Արևաստված, տեր իմ, մարդկության հովիվ»[47]: Հիշարժան է նաև, որ հին հնդիկների Միթրան և հին հույների Ապոլոնը ևս հովիվներ էին համարվում[48]:

Սարդուրի I - ի արևապաշտ լինելու մասին է խոսում նաև նրա անունը, որը, հավանաբար, գահանուն է: Ա. Սեյսը ուրարտական դիցարանի Սարդի դիցանունն առնչում էր լյուդիական Σα'ρδις դիցանվան և իրանական սարդ «տարի» բառի հետ, նշելով, որ լյուդիական համապատասխան բառն ունեցել է «տարի» և «Արև, Արևաստված» իմաստները[49]: Գր. Ղափանցյա-

---

[43] Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի. Տիեզերագիտութիւն եւ տոմար. Երևան, 1940, էջ 37:

[44] Խ ո ր ե ն ա ց ի, Ա, լա: Г р. К а п а н ц я н. Историко-лингвистические работы к начальной истории армян. Ереван, 1956, с. 323; Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն. «Վահագնի երգի» ակրոստիքոսների վերականգնման և վերծանման փորձ.– ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, №4, էջ 78-79:

[45] УКН, № 1, Ն. Ա գ ո ն ց. նշվ. աշխ., էջ 184, Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 46:

[46] УКН, № 1; Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա (այսուհետև՝ ՀԺՊՔ). հ. I, Երևան, 1981, էջ 39 – 40:

[47] "Keilschrifturkunden aus Bogazkoi", Hf. 1-30, Berlin, 1923-1939 (VI, 45, III, 13; VI, 46, III, 52).

[48] В. Н. Т о п о р о в. Пастух.– "Мифы народов мира", т. II, М., 1988, с. 291-292.

[49] A. H. S a y c e. The Cuneiform Inscriptions of Van.– "Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland", XIV, London, 1882, p. 487. Sardi դիցանունը *sard- («տարի», «արև») բառից բխեցնելը հիմնավորված չէ: Սարդի դիցուհու զուգակից Նալաինի աստծու

նի կարծիքով, սրանց շարքն է դասվում նաև Սարդուրի անունը. «Թերևս ուրարտական Sardur թագավորների անունը այս աստծու անունից է կազմվել –ur ածանցով»[50]: Հեթանոս հայերի նավասարդ ամսի անունը ևս պարունակում է այդ նույն բաղադրիչը՝ նաւա - սարդ, նշանակելով «նոր տարի» և առնչվում է հնդիրանական լեզուների այնպիսի բառերին, ինչպիսիք են հին հնդկ. çarad «տարի, աշուն», ավեստ. sarəδa «տարի», պարս. sāl «տարի», օսերեն sard «ամառ» և այլն[51]: Սարդուրի I-ի արևապաշտության տեսանկյունից ուշադրավ է, որ նրա անվանակից Սարդես (Σαρδεις) քաղաքը նստավայր ունեցած Լյուդիայի Կրեսոս թագավորը ևս արևապաշտ էր[52]: Ըստ Հերոդոտոսի, պարսից Կյուրոս թագավորի հրամանով խարույկ հանված (մ. թ. ա. 547) դերի Կրեսոսին փրկել էր Ապոլոնը՝ անձրև հզելով ու հանդցնելով խարույկը[53]: Ըստ նրա, Ապոլոնը նաև Կրեսոսի մայրաքաղաք Սարդեսի հովանավորն էր, որովհետև նրա շնորհիվ էր երեք տարով հետաձգվել ճակատագրով կանխորոշված Սարդեսի գրավումը պարսիկների կողմից[54]: Անկասկած, քաղաքի հովանավորի դերում հանդես է եկել ոչ թե հունական Ապոլոնը, այլ նրա տեղական – լյուդիական զուգահեռ Սարդիսը՝ քաղաքի անվանակից Արևաստվածը: *Sard - արմատը պարունակող Սարդիս, Սարդես և Սարդուրի անունների «արևային» ստուգաբանության տեսանկյունից հետաքրքիր է սարդիոն (σαρδιον) կոչված ազնիվ քարի անունը: Սովորաբար, այն բխեցնում են Սարդես քաղաքի անունից[55], բայց, հավանաբար, քարին այդ անունը տրվել է արևի դույնը հիշեցնող իր «դեղնադույն կարմիր դույնի»[56] պատճառով:

Ուրարտական Սարդուր(ի) արքայանվան «արևային» ստուգաբանության օգտին կարող է վկայել նաև հետևյալ փաստը: Ռուսա I – ը (մ. թ. ա. 735 – 713) արձանագրություններից մեկում իրեն կոչում է Ռուսա Սարդուրորդի՝ «անվանյալ Ուեդիպրի» կամ «որի անունն է ⁱUedipri»[57]: Ն. Ադոնցը Ռուսայի կամ նրա հոր՝ Սարդուրիի, երկրորդ անունը տրոհելով Ued - և - ipri բաղադրիչների, ավելացնում է. «Ռուսայի կամ նրա հոր մականունը՝ Ուեդիպրի, հիշեցնում է Լուտիպրի, առաջին Սարդուրի հոր անու-

(Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 26) անունը առնչվելով Աղձնիքի Nala լեռնանվանը (Ն. Ա դ ո ն ց. նշվ. աշխ., էջ 228), խոսում է աստվածային այս զույգի «լեռնային» ծագման մասին: Ըստ այդմ, Sardi<*sar-di, որտեղ առաջին բաղադրիչը հայերեն սար (<հ.-ե. *Kr-) բառն է, իսկ երկրորդը դիք բառի դի_արմատը (<հ.-ե. *dhes-): Ուրեմն, ճիշտ չէ այս դիցանունը *s-ardi բաղադրիչների տրոհելը (Г. А. М е л и к и ш в и л и. Наири-Урарту. с. 236)՝ վերջինիս մեջ «աստղ» հայտնաբերելու հույսով:

[50] Գ ր. Ղ ա փ ա ն ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 49: Հմմտ. УКН, с. 440.

[51] Նույն տեղում, Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան. հ. III, էջ 435:

[52] Հ ե ր ո դ ո տ ո ս. Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Սիմոն Կրկյաշարյանի, Երևան, 1986, էջ 40, 41:

[53] Նույն տեղում, էջ 38, 39, 41:

[54] Նույն տեղում, էջ 41:

[55] М. Ф а с м е р. Этимологический словарь русского языка. Т. III, М., 1971, с. 605. Հ. Աճառյանի «Արմատական բառարանում» հարցականի տակ է դրված (հ. IV, էջ 187):

[56] Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց. Հայերեն բացատրական բառարան. հ. IV, Երևան, 1945, էջ 192:

[57] Ն. Ա դ ո ն ց. նշվ. աշխ., էջ 180:

նը»[58]: Մենք ընդունում ենք ուրարտական արքայատոհմում ընդունված հիշյալ արքայանունների Ued – ipri և Lut – ipri բաղադրիչների տրոհումը, բայց չենք ընդունում դրանց Ն. Ադոնցի տված ստուգաբանությունները («կին» + «տեր»), մանավանդ, որ դրանցում իրենց արտացոլումն են գտել Ուրարտուի ոչ հնդեվրոպական լինելու տեսակետը: Ued–ipri-ի երկրորդ բաղադրիչի իմաստն առայժմ մութ է մնում (համենայն դեպս այն euri «տեր» բառի տարբերակ համարել չի կարելի)[59], իսկ առաջին Ued - //*u̯ed - բաղադրիչը, մեր կարծիքով, ազգակիցն է հուն. Fέτος, խեթ. u̯ett-, հին հնդկ. vatsa- «տարի» նշանակող բառերի: Uedipri անվան մեջ այն, ըստ երևույթին, նշանակում է «արև» և անվանը տալիս է այն նույն իմաստը, ինչ ունի նաև Sarduri անունը:

Արևին և տարվան տրված անունների նույնականությունը զարմանալի չէ, որովհետև, ինչպես Անանիա Շիրակացին էր նշում, «Արդ յայտ է, թէ զտարի յարեգակնէ գիաացաք. եւ զամիսս ի լուսնոյ»[60]: «Արև» և «տարի» հասկացությունների հնից եկող կապն իր արտացոլումն է գտել ամանորյա գաթայի տարի անվան մեջ, երբ այդ գաթան իր ձևով և տեսքով արևն է խորհրդանշում: Տարվա ընկալումը թռչունի տեսքով նույնպես գալիս է «արև» և «տարի» («արև»-«թռչուն» միջնորդ օղակով) հասկացություններ-ի համադրումից: Դրա վկայություններն են Վանում և Գառնիում գրի առնված ու «տարի» պատասխանն ակնկալող հետևյալ հանելուկները:

1) «Մե խավըմ կա՝ ճըլպըտուն (խատուտիկ) ի,
Ճետերն (ճագ) իտև տըսվերկու ի»[61]:
2) «Մե կռթան (թուխս),
Զորս ճռթան,
Տասներկու ճռթվռթան»[62]:

Այս ամենը կասկած չի թողնում, որ վաղ Ուրարտուում Արևի աստվածը եղել է թագավորի և թագավորող հարստության հովանավոր աստվածը: Իր այդ դերը նա մասամբ պահել էր նաև հետսարգուրյան Ուրարտուում: Բերկրիի գետաբերանի կոթողը, որի արձանագրությամբ Մենուան իր և իր որդու համար արևի աստված Շիվինիից «կյանք, ուրախություն, մեծություն» էր խնդրում, վկայությունն է այն բանի, որ «Շիվինին եղել է նաև թագավորող հարստության հովանավոր աստվածություններից մեկը»[63]: Բնականաբար, վաղ Ուրարտուում Արևի աստվածը լինելու էր նաև գիցա-

---

[58] Նույն տեղում, էջ 191, 194:

[59] Ուրարտական արձանագրությունների euri բառը հ.-ե. ծագում ունի: Այն հայերեն իւր բառի ավելի հին *եւր ձևն է ներկայացնում՝ ծագած հ.-ե. *seu̯e-r- նախաձևից (Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. II, Երևան, 1973, էջ 253-254): Իմաստի զարգացման տեսանկյունից համա. պարս. xod «ինքը», «իրենը», xoda «տեր» (միջին պարս. xvatay) և Xoda «Աստված»:

[60] Ա. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 293:

[61] Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 17:

[62] Նույն տեղում:

[63] Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 46:

րանի գերագույն աստվածը[64]: Դրա ուղղակի վկայությունն է Անձավի (Անզաֆ) ավերակ բերդից հայտնաբերված վաղուրարտական վահանի բեկորը: Այստեղ պատկերված են իրական և երևակայական կենդանիների վրա շարեշար կանգնած աստվածներ, որոնց ընթացքը ձախից աջ է՝ կրկնելով արևի երկնակամարային շարժման ուղղությունը: Երթը գլխավորում է արևի աստվածը, որն իր մարմնի վերնամասով բոցեղեն շրջանակի մեջ է, իսկ նրա մարմնից ու ձեռքի երկար նետից բոցեր են ժայթքում: Որ նրա ձեռքինը նետ է և ոչ թե նիզակ, պարզվում է նրա ձախ ձեռքի աղեղից, որից արձակված նույնպիսի մի նետ հասել է ուրարտացիներին դիմադրող թշնամիներին: Արևի աստվածը վահանին պատկերված է Հայկի նման աղեղնավոր և հետիոտն ռազմիկ[65], բայց նաև Վահագնի նման բոցածին և քաջություն շնորհող[66]:

Օ. Բելլին կարծում է[67], որ բոցեղեն աղեղնավոր աստվածը Խալդին է, բայց դա Խալդին չէ, այնպես, ինչպես նրան հաջորդող աստվածը Թեյշեբան չէ (որովհետև պատկերված է առյուծի վրա), իսկ սրան հաջորդողն էլ Շիվինին չէ (որովհետև պատկերված է ցուլի վրա): Փաստորեն, վահանի վրա արտացոլումն ենք տեսնում վաղուրարտյան դիցարանի, որում աստվածների հատկանիշները և նրանց սրբազան կենդանիների (խորհրդանիշ կենդանիների) համապատասխանությունը լրիվ չի համընկել Իշպուինիի և Մենուայի կանոնակարգած ուրարտական դիցարանի աստվածների հատկանիշների ու խորհրդանիշերի հետ: Վաղուրարտյան դիցարանը գլխավորած Արևաստվածը հեթանոսական Վահագնի նման եղել է նաև ռազմիկ աստված: Անձավի վահանին պատկերված կովի տեսարանի համաձայն, նա կարող էր իր աստվածային շքախումբ-զորաջոկատով օգնության հասնել և անձնական մասնակցությամբ հաղթանակ շնորհել ուրարտական բանակին: Հաղթության ավետաբերները Արևի աստծու առջևից սլացող իրարահաջորդ երեք արծիվներն են:

Ռազմիկ Արևաստվածը ոչ միայն ուրարտական թագավորի և արքայատոհմի, այլև սլետության հովանավոր աստվածն է եղել դրա գոյության վաղ շրջանում: Հայտնի է, որ Արևի աստվածն ուներ նաև միայն իրեն բնորոշ մի գործառույթ. նա պայմանագիր-դաշինքների նախաձեռնող, իրականացնող և դրանց կատարմանը հսկող աստված էր: Հնդիրանական Միթրայի (Միհր) անունը Ավեստայի լեզվում «պայման», «համաձայնություն», «պայմանագիր» է նշանակում, իսկ հին հնդկ.՝ «բարեկամ–ընկեր» (հին հնդկ. չեզոք սեռով՝ «բարեկամություն», «պայման, պայմանագիր»)[68]: Իսկ որ ուրարտական թագավորությունը ստեղծվել էր դաշնային հիմունքներով, վկայում է թագավորների լրիվ տիտղոսաշարը, որի մեջ հիշատակվում են նախ զինվորական դասի վերնախավի կողմից կառավարվող «երկրներ» // իշխանությունները (KUR Šuraue), ապա բարիքներ ար-

---

[64] *Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն. Նախնական Ուրարտուի..., էջ 226-231:*

[65] *Խ ո ր ե ն ա ց ի. Ա, Ժ, Ա, Ժա: Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն, գլ. Ա, Երևան, 1939, էջ 3-5:*

[66] *Խ ո ր ե ն ա ց ի. Ա, լա: Ագաթանգեղայ պատմութիւն Հայոց, ԺԲ, 127, Երևան, 1983:*

[67] O. B e l l y. The Anzaf Fortresses and Gods of Urartu. Istanbul. 1999, p. 37-41.

[68] В. Н. Т о п о р о в. Митра.— "Мифы народов мира", т. II, с. 154, 157.

տադրողների դասի վերնախավի կողմից կառավարվողները (KUK Biainaue) և, այնուհետև, տիտղոսաշարի վերջում, թագավորության և քրմական դասի կրոնական կենտրոն Տոսպ քաղաքը (UKU Tuspa)[69]:

Վանի «Մհերի դռան» արձանագրությունը պահանջում է զոհաբերություններով տոնախմբություն կատարել «Արևի ամսին»[70], բայց Արևի աստվածը՝ այս դեպքում վանյան Շիվինին, հիշատակված է դիցարանի երրորդ տեղում, իսկ տռաջին տեղում Խալդին է: Պարզ է, որ «Արևի ամսին» տեղի ունեցող զոհաբերություն — տոնախմբությունը նախապես կատարվելու էր Արևի աստծու պատվին: Իսկ եթե դրանք տեղի էին ունենում Վանում, ուրեմն, նախ և առաջ վերաբերելու էին Արևաստծու տեղական տարբերակին՝ վանյան Շիվինի աստծուն: Ասվեց, որ Արևաստծու պաշտամունքն այստեղ գոյություն է ունեցել Սարգուրի I-ից էլ առաջ[71]: Հայտնի է, որ ուրարտական դիցարանը ներկայացնող «Մհերի դռանը» իր անունը տված Մհերը «Սասնա ծռեր» դյուցազնավեպի փոքր Մհերն է՝ Միթրա // Միհր արևային աստծու վիպական ժառանգորդը[72]: Բայց ուրարտական կանոնակարգված դիցարանը ներկայացնող «Մհերի գուռը» վերագրում են ոչ թե Արևի աստծուն, այլ Խալդիին՝ որպես «Խալդիի գարսլասներ»: Ի. Դյակոնովին սա հիմք է տվել եզրակացնելու, որ հետուրարտական ժամանակներում Խալդի և Միթրա // Միհր աստվածները նույնացված են եղել[73]: Իսկ դա սկսվելու էր ավելի վաղ, երբ Արևի տստծու առանձին գծեր յուրացրած Խալդին ևս ընկալված է եղել արևային աստվածություն: Դրա վառ ապացույցներից է Արևմտյան Հայաստանում հայտնաբերված գոտու այն պատկերը, որտեղ առյուծի վրա կանգնած Խալդին, Շիվինիի նման, դլխավերևին ունի արևի թևավոր սկավառակը[74]: Խալդին միայն Արևի աստծու գծերը չէ, որ յուրացրել էր: Ինչպես Ս. Հմայակյանն է դրում, «Ուրարտական կրոնական քաղաքականության մեջ ձգտում է նկատվում եթե ոչ առ միապաշտություն, ապա շատ կայուն գիծ դիցարանում Խալդիի պաշտամունքի գերակշռությունն ապահովելու ուղղությամբ... Խալդին հովանավորն էր նաև բազմաթիվ երևույթների, որոնք ունեին իրենց հատուկ աստվածությունները և ըստ էության ինքնուրույն կարող էր ներկայացնել ամբողջ դիցարանը: Բացի դրանից, այլևայլ աստվածություններ միաձուլվում էին Խալդիի հետ, կարծես նրա պաշտամունքը ամբողջացնելու նպատակով»[75]:

---

[69] УКН, №19, №155 և այլն, Գ ր. Ղ ա փ ա ն ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 18–19, Ն. Ա դ ո ն ց. նշվ. աշխ., էջ 150, Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն. Դասերը և եռադասության դրսևորումները հին ու վաղմիջնադարյան Հայաստանում. Գյումրի, 2001, էջ 25–26: Փաստերը չեն հաստատում կարծիքը, թե այն հիմնադրվել է փոքրաթիվ էլիտայի կողմից (P. Z i m a n s k y. Archaeological Inquiries into Ethno-Linguistic Diversity in Urartu.– "Greater Anatolia and the Indo-Hittite language Family", Washington D. C., 2001, p. 20, 24):

[70] УКН, № 27; ՀԺՊՔ, հ. I, էջ 45, 47, ծանոթ. 1:

[71] Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 46:

[72] Գ. Ս ր վ ա ն ձ տ յ ա ն ց. նշվ. աշխ., հ. I, էջ 88, Սասնա ծռեր. հ. II, մաս 2-րդ, Երևան, 1951, էջ 859, Կ. Մ ե լ ի ք - Օ հ ա ն ջ ա ն յ ա ն. Միթրա-Միհրի արքանյակներն ու գործակալները.– Գրական-բանասիրական հետախուզումներ, I, Երևան, 1946, էջ 269–271, 296–297:

[73] И. М. Д ь я к о н о в. К вопросу о символе Халди.— "Древний Восток", № 4, Ереван, 1983, с. 191—192.

[74] Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 20-21:

[75] Նույն տեղում, էջ 34:

Նախնական Ուրարտուն ընդգրկում էր Վանա լճի ափերը և բավականաչափ հեռու էր գտնվում Ուրմիա լճից հարավ - արևմուտք (ներկայիս Իրաքի հյուսիս - արևելքում) տեղավորված Մուծածիր փոքրիկ իշխանությունից[76]*: Սա ոչ միայն տարածքային, այլև քաղաքական տեսակետից ևս որևէ առնչություն չուներ Ուրարտուի հետ, որովհետև մինչև Իշպուինիի կողմից հպատակեցումը, Մուծածիրը կախվածության մեջ էր Ասորեստանից: Հոգևոր-մշակութային տեսակետից ևս նախնական Ուրարտուն և Մուծածիրը հեռու էին իրարից: Վերջինիս կապերը բուն Ասորեստանի և Հյուսիսային Միջագետքի մյուս շրջանների հետ էին, ընդ որում այնքան սերտ, որ մուծածիրյան Խալդի աստվածը Խալդիա անունով ճանաչվում և պաշտվում էր նաև Հյուսիսային Միջագետքում՝ բուն Ասորեստանը ներառյալ*[77]*: Ի դեպ, դա վերաբերում է ոչ սակավաթիվ մարդկանց՝ սկսած շարքայիններից մինչև Ասորեստանի գոռոզ թագավորները: Դրա վկայություններն են ասորեստանյան դիցանվանակիր այնպիսի անձնանունները, ինչպիսիք են Խալդի հիմքով կազմված Խալդիալին, Խալդիաբուսուրը, Խալդիէթիրը, Խալդիրիմանին, Խալդինասիրը և այլն*[78]*: Դրա վկայություններից է նաև Սարգոն II թագավորի մասնակցությունը Մուծածիրում տեղի ունեցած արարողություններին*[79]*: Խալդին վաղ Ուրարտուի համար օտար աստված լինելու մասին է խոսում նաև նրա գլխավոր տաճարի Ուրարտուից դուրս՝ Մուծածիրի թագավորության ենթակա (իսկ նախապես գրանից անկախ) Մուծածիր // Արդինի քաղաքում դանվելու փաստը: Ի դեպ, այստեղ նրա կինն էր համարվում ոչ թե Ուրարտուի Մայր դիցուհին՝ Ուարուբաինին, այլ տեղական Բագմաշտու (Բագբարտու) դիցուհին*[80]*:*

Իշպուինի թագավորի կողմից Խալդի աստծու պաշտամունքի ներմուծումը, դրա առաջմղումը[81] *և Մուծածիրի նկատմամբ նրա ցուցաբերած բացահայտ բարեհաճ վերաբերմունքը պայմանավորված չէր միայն նրանով, որ այնտեղ գահակալում էր նրա Սարդուրի որդին*[82]*: Այդպիսի վերաբերմունքն ուներ իր ինչպես ռազմավարական, այնպես էլ գաղափարախոսական խոր պատճառները: Նախ, հպատակեցնելով Մուծածիրը և ամրապնդելով Ուրարտուի կապերը նրա հետ, Իշպուինին Մուծածիրը բացառիկ*

---

[76] Н. А р у т ю н я н. Топономика Урарту, с. 144-145.

[77] Б. Б. П и о т р о в с к и й. Ванское царство (Урарту). М., 1959, с. 221.

[78] АВИИУ, № 80; Б. Б. П и о т р о в с к и й. *Նշվ. աշխ., էջ 228, Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 37:*

[79] АВИИУ, № 50; *Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 37:*

[80] АВИИУ, № 49; УКН, № 25, № 65; Г. А. М е л и к и ш в и л и. Наири-Урарту, с. 169, 372—373; Б. Б. П и о т р о в с к и й. *Նշվ. աշխ., էջ 223,* И. М. Л о с е в а. Некоторые урартские ювелирные изделия с изображением ритуальных сцен (к вопросу об иконографии бога Халди и богини Арубани).— "Древний мир", М., 1962, с. 307-310.

[81] M. S a l v i n i. *Նշվ. աշխ., էջ* 35:

[82] К. Ф. Л е м а н н - Х а у п т. Вступительная лекция по истории и культуре халдов.— "Труды Тбилисского государственного университета", VI, Тбилиси, 1938, с. 126; *Գ ր. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Նշվ. աշխ., էջ 156, 207,* А. М е л и к и ш в и л и. Наири-Урарту, с. 204; Б. Б. П и о т р о в с к и й. *Նշվ. աշխ., էջ 110, Ն ո ւ յ ն ի՝* Искусство Урарту. Л., 1962, с. 37, 95.

կարևոր հենակետ էր դարձնում թշնամի Ասորեստանի դեմ: Ապա, նոր աստծու պաշտամունքի ներմուծումով և այդ աստծուն թագավորի ու պետության հովանավոր բացարձակ գերագույն աստված[83] հռչակելով, Իշպուինին ձգտում էր գաղափարախոսական հիմնավորում տալ արդեն միահեծան թագավորական իշխանությանը: Անշուշտ, Մուծածիրում Սարգուրի Իշպուինորդու գահակալությամբ և Մուծածիր – Ուրարտու բազմակողմ կապերի ամրապնդմամբ շահագրգռված էին նաև Մուծածիրում՝ Ասորեստանի կողմից բազմիցս ասպատակված և մ. թ. ա. 828 թ. վերստին նվաճված այդ փոքր իշխանությունում[84]: Մուծածիրցիները դրանում շահագրգռված էին հետևյալ պատճառներով. նախ, հպատակվելով Ուրարտուին, նրանք կկարողանային նրա ռազմական օգնությամբ կասեցնել ասորեստանյան ավերիչ արշավանքները, ապա Մուծածիրում իշխանության հասած քրմական դասի վերնախավը կկարողանար գործունեության շատ ավելի լայն ասպարեզ ձեռք բերել: Ուրարտական կրոնի գլխավոր բաղադրատարը դարձած Խալդիի պաշտամունքը հնարավորություն էր տալիս այդ պաշտամունքի սպասավորներին՝ մուծածիրյան քրմերին, իրենց գործունեությունը ծավալելու նաև ողջ Ուրարտուում՝ բարձրացնելով մուծածիրյան քրմության միջազգային հեղինակությունը[85], մեծացնելով հասարակական և պետական գործերում նրա ազդեցությունը, ընդարձակելով նրա տնտեսական հենարանը: Դրանք էին այն հիմնական պատճառները, որոնք մուծածիրյան քրմական վերնախավին դրդել էին համաձայնել Իշպուինիի որդի Սարգուրիի գահակալման իրողության հետ և որդեգրել թերուրարտյան քաղաքականություն:

Խալդիի պաշտամունքի նրբություններին քաջատեղյակ մուծածիրյան քրմերը նրա պաշտամունքի հետ թափանցելով Ուրարտու՝ այստեղ են բերել նաև այդ պաշտամունքի ծիսական լեզուն և գիրը: Եթե դրանք ծանոթ լինեին հայ հասարակությանը մինչև Իշպուինիի բարեփոխումները, ապա Սարգուրի I-ն իր արձանագրությունները գրել չէր տա թշնամի ասորեստանցիների լեզվով՝ ասուրերենով: Այդ նորամուծ լեզվով և դրա դրությամբ են իրենց արձանագրությունները գրել տվել ինչպես Իշպուինին, այնպես էլ նրա խալդիապաշտ հետնորդները՝ ուրարտական իրարահաջորդ թագավորները: Դա է եղել պատճառը, որ վերջին տասնամյակներին այդ լեզվին ամրագրվել են «ուրարտերեն» և «բիայներեն» անվանումները, երբ այդ լեզուն ո՛չ վաղ Ուրարտուի, ո՛չ էլ նրա կենտրոնական մասում գտնվող Բիայնա // Բիայնիլիի հետ որևէ առնչություն սկզբնապես չուներ: Ավելի ճիշտ էին վարվում այդ լեզվի առաջին մասնագետները, որոնք այդ

---

[83] .Գ ր. Հ ա փ ա ն ց յ ա ն. Նշվ. աշխ., էջ 113, В. И. А в д и е в. История древнего Востока. Л., 1953, с. 481; И. М. Д ь я к о н о в. К вопросу..., с. 34; Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 34:

[84] АВИИУ, № 34; Н. В. А р у т ю н я н. Биайнили (Урарту), с. 130-131.

[85] .Դրա աճի ապացույցը կարելի է համարել Խալդիի պաշտամունքի առկայությունը (Ուրարտուի միջնորդությա՞մբ) Մուծածիրի և Ուրարտուի հարևան Մանայում ևս (A. L e m a i r e. Une inscription arameenne du VIIIe s. av. J.C. trouvee a Bukan.– "Studia Iranica", 27, 1998, p. 21-22):

լեզուն կոչում էին խալդերեն[86]: Սա ավելի հարմար անվանում է, բայց ոչ այն առումով, որ Ուրարտուի բնակիչներն էլ կոչվել են խալդեր, այլ որ դա եղել է Խալդիի պաշտամունքի լեզուն: Որ Խալդիի պաշտամունքի լեզուն՝ խալդերենը, Ուրարտու է մտել որպես սրբազան լեզու, ցույց է տալիս դրանով գրված առաջին արձանագրությունների գերազանցապես շինարարական-պաշտամունքային բնույթը[87]: Դրա մասին են խոսում նաև Կելիշինի ու Թոփզավայի կոթողների արձանագրությունները, որոնց խալդերեն տեքստերը գրված են արևելյան՝ սրբազան (դեպի աղոթարանը նայող) կողերին, իսկ ասուրերեն տեքստերը գրված են դրանց արևմտյան կողերին[88]: Խալդերենով գրված պաշտոնական արձանագրությունները նրա սրբազան բնույթի պատճառով են տառապում «խալդամոլությամբ»[89]: Ինչպես Գր. Ղափանցյանն է նկատել տալիս, «Ասուրա-բաբելական կամ հենց հեթիտյան (խեթական) արձանագրությունները չունեն այսպիսի աստվածամոլություն»[90]:

Ուրարտուում խալդերենն ընդունելի էր դարձել ոչ միայն թագավորական իշխանության պարտադրանքի պատճառով, այլև շնորհիվ այն բանի, որ իրենց հնդեվրոպական ակունքներին հավատարիմ մնացած մեր նախնիները հնդեվրոպական մյուս հին ժողովուրդների նման աստվածներին տարբերում էին մարդկանցից ոչ միայն նրանով, որ առաջիններն անմահ են, իսկ երկրորդները մահկանացու, այլև նրանով, որ առաջիններն ունեն մարդու խոսքից տարբերվող յուրահատուկ խոսք[91]: Այսպիսով, խալդերենի ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր իմացությունը մնում էր քրմության առանձին խավի մենաշնորհը[92] անմատչելի մնացած բնակչության ճնշող մեծամասնության համար: Ի. Դյակոնովն այդ գրի ակունքները որոնելով Մուծածիր-Կումենուի (նաև, ըստ երևույթին, Ալզիի) խուռիական ավանդույթներում, միևնույն ժամանակ դրանով է բացատրում «Մուսասիրին հարևան Ասորեստանի զգալի ազդեցությունը ուրարտական գրի, մասնա-

---

[86] C. F. L e h m a n n - H a u p t. Corpus Inscriptionum Chaldicarum. Berlin-Leipzig, 1928-1935; J. F r i e d r i c h. Beitrage zu Grammatik und Lexikon des Chaldischen.– "Caucasica", Fasc. 7, 8, Leipzig, 1931; F. W. K ö n i g. Handbuch der chaldischen Inschriften.– "Archiv für Orientforschung", VIII, v. 1-2, Graz, 1955-1957.

[87] ՈՒԿՀ, № 4-19. *Որ Խալդիի պաշտամունքի լեզվի հայրենիքը եղել է Զագրոսի լեռնաշղթայում կամ նրան հարող տարածքում գտնվող այնպիսի մի շրջան, ինչպիսին Մուծածիրն էր, ցույց է տալիս նաև այդ լեզվի լուլու բառը, որից «Լուլուական- այսինքն՝ բարբարոսական, թշնամական: Ծագում է Զագրոսի շրջանում՝ Ուրարտուի և Ասորեստանի միջև բնակվող վայրենաբարո Լուլու ցեղի անունից» (ՀԺՊՌ, հ. I, էջ 56, ծանոթ. 2): Լուլումեական երկիրը՝ Զամուան, տեղադրվում է Ստորին (Փոքր) Զարի վերնագավառում* (Н. В. А р у т у н я н, Топонимика Урарту, с. 78, 129):

[88] ՈՒԿՀ, № 19, № 264, A. G o t z e. Zur Kelischin-Stele.— "Zeitscrift fur Assyriologie", № 1, Vienna, 1929, S. 100-128; *ՀԺՊՌ, հ. I, էջ 82:*

[89] *Գ ր. Ղ ա փ ա ն ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 114:*

[90] *Նույն տեղում:*

[91] G. D u m é z i l. La religion romaine archaique. Paris, 1966, p. 190; J. F r i e d r i c h. Göttersprache und Menschensprache in hittitische Schrifttum. Bern, 1954, S. 135-139; Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. Индоевропейский язык и индоевропейцы. Т. II, Тбилиси, 1984, с. 476.

[92] *Հմմտ. Գ ր. Ղ ա փ ա ն ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 96, 100:*

վորապես ուղղագրության վրա»[93]: Ըստ այսմ, հասկանալի է, թե ինչու հին հայերը նախնիներից ժառանգած հիշողությամբ հայրենի տարածքների սեպագիր արձանագրությունները համարում էին օտարամուտ՝ ասորեստանյան Շամիրամ թագուհու գործ[94]: Ճիշտ է, դրանց իսկական հասցեատերը՝ Իշպուինին, ժողովրդի հիշողության մեջ չէր մնացել, բայց ժողովրդական ավանդությունները գիտեին դրանց ճիշտ հասցեն, հիշում էին դրանց նախնական բնույթը և անգամ ներմուծման ժամանակը, որովհետև իր «դյութությամբ» և «վհկությամբ»[95] հայտնի վիպական Շամիրամի պատմական նախատիպը Իշպուինիի ժամանակակից Շամմուրամաթն էր՝ Ասորեստանի Շամշի - Ադադ թագավորի կինը[96]:

Վերոշարադրյալը հիմք է տալիս մերժելու արևելագիտության մեջ տարածում գտած այն կարծիքները, թե Սարդուրի Ի-ը ծագումով Մուծածիրից էր, թե ինչպես նա, այնպես էլ իր հիմնադրած թագավորական դինաստիան կապ չեն ունեցել Ուրարտուի նախորդ դահակալ Արամեի և նրա արքայանիստ Արծաշկու // Արճեշի հետ, թե Մուծածիրում իր գլխավոր տաճարն ունեցած Խալդին ի սկզբանե Ուրարտուի գլխավոր աստվածն էր: Ինչպես տեսանք, Սարդուրի Ի-ը ոչ թե խալդիապաշտ էր, այլ արևապաշտ: Նա ծանոթ չի եղել ո՛չ Խալդի աստծուն, ոչ էլ իր հաջորդ Իշպուինիի օրոք, Մուծածիրի հպատակեցումից հետո, Ուրարտու ներմուծված նրա պաշտամունքի լեզվին: Անկասկած, Ուրարտուի հոգևոր-մշակութային կյանքում տեղ գտած հիշյալ փոփոխությունները պայմանավորված էին իր ներքին կյանքությունը հաստատած, տնտեսական ու ռազմական վերելք ապրող պետությանը նորացված գաղափարախոսությամբ օժտելու պահանջով: Գաղափարախոսություն, որը կոչված էր զարգացնելու ինչպես այդ բնագավառներում ձեռք բերված հաջողությունները, այնպես էլ ամրապնդելու թագավորի միահեծան սրբազան իշխանությունը:

БОГ СОЛНЦА В РЕЛИГИОЗНОЙ ПОЛИТИКЕ РАННЕГО УРАРТУ.

САРГИС ПЕТРОСЯН

Р е з ю м е

Город Уишини, второй известный центр культа урартского бога Солнца, по нашему мнению, локализуется в районе Арцашку (совр. Арчеш, Ерджиш) –

---

[93] И. М. Д ь я к о н о в. Хурритский и урартский языки. – "Языки Азии и Африки. Языки древней Передней Азии", М., 1979, с. 52, 54; О н ж е. Предыстория армянского народа, с. 140, пр. 154.

[94] *Խ ո ր ե ն ա ց ի, Ա, ԺԷ:*

[95] *Նույն տեղում, Ա, ԺԵ:*

[96] С. Б. А р у т ю н я н. Шамирам. – "Мифы народов мира", т. II, с. 639; В. В. С т р у в е. История древнего Востока. Л., 1941, с. 306, 349; Д. Ч. С а д а е в. История древней Ассирии. М., 1979, с. 91-93.

первой столицы Урарту. Город Уишини носил имя главного бога раннего Урарту – бога Солнца *Uisini (*Uis-ini<u.-e.*ues- "освещать, светить", "сжигать" + суффикс -in-). Как первый царь Урарту Араме (Араму), так и его преемник Сардури I (845-825 гг. до н. э.) были солнцепоклонниками. Сардури I перенес столицу государства в Тушпу (совр. Ван) и с богом Солнца города Уишини идентифицировал бога Солнца города Тушпы – Шивини (*Siu-ini<u.-e. *k'eu- "сиять, освещать", "сверкать" + суффикс -in-). После него, в годы правления Ишпуини (825-810 гг. до н. э.), муцацирский бог Халди стал верховным богом государства Урарту, а бог Солнца (^{D}UTU, ^{D}Šiuini) занимал третье место в новом, канонизированном пантеоне.

GOD OF THE SUN IN THE RELIGIOUS POLITICS OF EARLY URARTU

SARGIS PETROSYAN

S u m m a r y

According to the author, the town of Uisini is located in the same region as Arşasku (present-day Archesh, Erjis), the first capital of Urartu. The town used to be the centre of the cult of *Uisini (*Uis-ini<*ues- "to burn to brighten"+ suffix in-), the God of the Sun and main God of earlier Urartu. Both the first king of Urartu Arame (Aramu) and his successor Sarduri I were sun-worshippers. During the rule of Sarduri I (845-825 B.C.) Tuspa (present-day Van) became the capital of the country and *Uisini, the God of the Sun, became identified with Siuini (*Siu-ini<*k'eu-"to shine, to scintillate"+in-), i.e. the God of the Sun from Tuspa. Later on, during the rule of Ispuini (825-810 B.C.) Haldi from Musasir became the supreme God of Urartu, while the God of the Sun (^{D}UTU, ^{D}Siuini) was only the third in the state pantheon.